

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Շուշիի ազատագրման օրվա և Մեծ հայրենականում տարած հաղթանակի առթիվ

06.05.2016



Միրելի՛ վայոցձորցիներ,

Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի վայոցձորցի թանկագին՝ վետերաններ,

Հայոց բանակի հարգարժան գեներալներ, սպաներ, զինվորներ:
Սրտանց շնորհավորում եմ ձեզ Շուշիի ազատագրման օրվա և Մեծ հայրենականում տարած հաղթանակի առթիվ:

1992 թվականի մայիսի 8-ին ազատագրվեց Շուշին և այնուհետև մայիսի 9-ը մեր ժողովրդի համար ձեռք բերեց կրկնակի հաղթանակի խորհուրդ:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին հայ ժողովուրդը, ԽՍՀ մյուս ժողովուրդների հետ համատեղելով ուժերը, ընդհանուր պայքարի արդյունքում հաղթեց ֆաշիզմի դեմ մղվող պատերազմը, տոնելով զրկանքների ու համառ պայքարի գնով ձեռք բերած Մեծ Հաղթանակը: Իսկ Արցախի ազատագրական պայքարում, անօրինականորեն Ադրբեջանին բռնակցված Արցախի ազատագրումը կայացավ Հայաստան-Արցախ- Սփյուռք եռամիասնության, երկրի սահմանները պահող մեր հայրերի ու եղբայրների, մեր քույրերի, անգամ ծերունագարդ պապիկների կյանքի գնով: Արցախի ազատամարտը իրավամբ դարձավ նոր սերնդի հերոսապատումի մերօրյա վկան:

Միրելի վայոցձորցիներ, որպես սահմանամերձ մարզի բնակիչներ, այսօր մենք առավել քան բարձր ենք գնահատում խաղաղության զինը, որը մեզանից խլեց հարյուրավոր մեր քաջ զավակներին, ովքեր իրենց կյանքը չինայեցին թեկուզև փխրուն խաղաղության հաստատման համար: Համոզված եմ, որ նրանց նվաճած խաղաղությունը պահպանելու համար բոլորս ենք պատրաստ կանգնելու մեր հերոսացած բանակի կողքին՝ համալրելով Հայոց բանակի շարքերը, կրկնելու մեր նահատակված զավակների սխրանքը: Սակայն այսօր բոլորիս մաղթում եմ խաղաղ գործունեություն, ի շահ մեր հայրենիքի, ի բարօրություն մեր ժողովրդի:

Միրելիներս, թույլ տվեք բոլորիդ անունից բարի հիշողություն մաղթել Արցախի ազատագրական պայքարում և ապրիլյան քառօրյա կռվում զոհված մեր սիրելի զավակներին: Թող լույս իջնի նրանց սուրբ շիրիմներին:

Թանկագին բարեկամներ, կրկին շնորհավորում եմ Շուշիի ազատագրման օրվա և Մեծ հայրենականում տարած հաղթանակի առթիվ, Հայոց բանակին մաղթելով քաջություն և հաղթանակներ կռելու կամք ու պատրաստակամություն:

Շնորհավոր տոնդ, հա՛յ զինվոր, փառք ու պատիվ քեզ, Հայո՛ց հաղթանակած բանակ: